Կարծիք

Հակոբ Համբարձումի Մանուկյանի «Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրները երկարաժամկետ հեռանկարում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրը դիտարկվում է որպես պետության մակրոտնտեսական կայունության, դիվերսիֆիկացման և ազգային անվտանգության ապահովման առանցքային նախադրյալ: Տնտեսական ակտիվության ու կապիտալի չափից ավելի կենտրոնացումը մայրաքաղաքային ագլոմերացիայում առաջացնում է կառուցվածքային անհամամասնություններ, որոնք երկարաժամկետ հեռանկարում սահմանափակում են տնտեսական աճի ներուժը: Մայրաքաղաքի գերհագեցումը հանգեցնում է ենթակառուցվածքային բեռի ավելացման, անշարժ գույքի շուկայում գների արհեստական աճի և էկոլոգիական մարտահրավերների խորացման: Միևնույն ժամանակ, մարզերում առկա աշխատանքային, հումքային և տարածքային ռեսուրսները մնում են թերօգտագործված՝ նվազեցնելով ընդհանուր տնտեսության արդյունավետությունը:

Տարածքային սոցիալ-տնտեսական բևեռացումը ներքին տարերային միգրացիայի գլխավոր դրդապատճառն է: Մարզերում որակյալ աշխատատեղերի, բարձր եկամուտների, ինչպես նաև կրթական ու առողջապահական ենթակառուցվածքների սահմանափակ հասանելիությունը խթանում է աշխատունակ ու երիտասարդ բնակչության արտահոսքը դեպի մայրաքաղաք և երկրից դուրս: Դա հանգեցնում է ծայրամասային շրջանների ժողովրդագրական ծերացմանը և մարդկային կապիտալի որակազրկմանը:

Աշխարհաքաղաքական բարձր ռիսկեր ունեցող տնտեսությունների համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, տարածքային համաչափ զարգացումն ուղղակիորեն առնչվում է ազգային անվտանգության ռազմավարությանը: ՀՀ մարզերում դիվերսիֆիկացված արտադրողականության ձևավորումն ու տեղական էկոհամակարգերի կայունացումն անհրաժեշտ են երկրի ճգնաժամային

դիմադրողականության ամրապնդման համար: Այս համատեքստում տարածքային անհամաչափությունների կրճատումն առաջնահերթորեն ենթադրում է մարզերում կրթական և առողջապահական համակարգերի որակական համահարթեցում:

Որպես խնդրի լուծման ինստիտուցիոնալ գործիք՝ տեղական ինքնակառավարման մարմիններին ֆինանսական անկախության և սեփական եկամուտների ձևավորման լիազորությունների փոխանցումը, մասնավորապես համապետական հարկերից մասհանումների մեխանիզմների ներդրման ճանապարհով, կստեղծի բարենպաստ գործարար միջավայր և կխթանի տարածաշրջանային նպատակային մասնագիտացումը: Հետևաբար, պետական կարգավորման թիրախը պետք է ուղղված լինի ոչ թե մայրաքաղաքի բնականոն տնտեսական աճի արհեստական սահմանափակմանը, այլ մարզերի ներքին արտադրողականության բարձրացմանը, ինստիտուցիոնալ հզորացմանը և ֆինանսական ինքնաբավության ապահովմանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունն ու հետազոտության գիտագործնական արժեքը կայանում են նրանում, որ այն չի սահմանափակվում միայն առկա իրավիճակի նկարագրությամբ, այլև գիտականորեն հիմնավորում է ՀՀ տարածքային զարգացման անհամամասնությունների հաղթահարման երկարաժամկետ ու գործուն մեխանիզմները: Ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ պետական կառավարման մարմինների կողմից ռազմավարական որոշումների կայացման և տարածքային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետության մարզերի անհավասար զարգացման հիմնական գործոնները՝ հետագայում մշակելով մարզերի միատարր երկարաժամկետ զարգացումն ապահովելու հայեցակարգ:

Այս նպատակին հասնելու համար աշխատանքում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- ✓ Գնահատել տարածաշրջանային անհամաչափ զարգացման հիմնական հետևանքների, ինչպես նաև այդ անհամաչափության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների վերաբերյալ ակադեմիական գրականությունը,

- ✓ Գնահատել տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովմանն ուղղված տարածաշրջանային և ազգային քաղաքականությունների իրականացման գործում պետության դերի վերաբերյալ ակադեմիական հայեցակարգերը,
- ✓ Դիտարկել արդյունավետ տարածքային քաղաքականության մշակման վերաբերյալ ՏՀԶԿ հանձնարարականները,
- ✓ Վերլուծել ՀՀ մարզերի հիմնական սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական ցուցանիշները՝ տարածքային անհամաչափության որոշիչ միտումները բացահայտելու նպատակով,
- ✓ Մշակել և փորձարկել տնտեսական կառուցվածքի և մարդկային կապիտալի որակի չափանիշներով մարզերի մասնագիտացման մեթոդաբանությունը,
- ✓ Վերլուծել մարզերի մասնագիտացման փոխկապվածությունները՝ դրանց հիմնական գործոնային պահանջմունքների և գործոնային արտադրողականության համատեքստում,
- ✓ Մշակել մարզերի գործոնային արտադրողականության մակարդակի վրա առանձին սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցության գնահատման տնտեսաչափական մոդել,
- ✓ Մշակել տնտեսաչափական մոդել՝ ՀՀ մարզերի տնտեսական աճի վրա արտաքին ու ներքին գործոնների ազդեցության դասակարգման համար,
- ✓ Գնահատել ազգային և տարածքային մակարդակների ռազմավարական փաստաթղթերը՝ մարզերի համաչափ զարգացմանն ուղղված առանձին ծրագրերի ու միջոցառումների ներդրման համատեքստում,
- ✓ Գնահատել տարածքային կենտրոնների զարգացման ծրագրերը՝ միջազգային կազմակերպությունների հանձնարարականներին համապատասխանության տեսանկյունից,
- ✓ Ուսումնասիրել տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական կայունության և անկախության ապահովման ուղղությամբ ՀՀ օրենսդրությունը,
- ✓ Մշակել հարկային եկամուտների բաշխման հարկաբյուջետային կանոնների փոփոխության սցենարային մոդել՝ տեղական բյուջեներում տեղի ունեցող փոփոխությունները որոշելու համար,

- ✓ Մշակել պետական քաղաքականության փոփոխության հայեցակարգային առաջարկություններ՝ մարզերի ֆինանսական անկախության շրջանակներում նախագծային կառավարման ներդրման համատեքստում:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Մշակվել և գնահատվել է տարածքային զարգացման անհամաչափության որոշիչ գործոնների մոդելը՝ Հայաստանի Հանրապետության մարզերի մասնագիտացման բացահայտման և աշխատանքի արտադրողականության հաշվարկի հիման վրա,
- Մշակվել և փորձարկվել է Հայաստանի Հանրապետության մարզերի տնտեսական աճի գործոնների եռամակարդակ գնահատման մոդել, որը թույլ է տալիս տարանջատել տվյալ մարզի սեփական արտադրողականության, երկրի մյուս մարզերի արտադրողականության, ինչպես նաև հարևան պետությունների սահմանակից տարածաշրջանների ազդեցությունը,
- Առաջարկվել է պետական տարածքային զարգացման քաղաքականության արդիականացման հայեցակարգ, որն ուղղված է արտադրության գործոնների արտադրողականության բարձրացմանը՝ նախագծային կառավարման մեխանիզմների ներդրման միջոցով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տարածքային և տեղական ինքնակառավարման ֆինանսական կայունության և անկախության ապահովման անհրաժեշտությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի տրամաբանությունը կառուցված է տեսականից դեպի գործնական-վերլուծական և կիրառական ուղղություններով:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, սահմանել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, ինչպես նաև ձևակերպել է գիտական նորույթն ու ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության ***առաջին գլխում***, որը կրում է ***«Տարածաշրջանների անհամաչափ զարգացման հիմնական պատճառների և այդ հարցում պետական քաղաքականության դերի վերաբերյալ ակադեմիական հայացքների գնահատումը»*** (Оценка академических воззрений по вопросам основных причин неравномерного развития регионов и роли государственной политики в этом вопросе) վերնագիրը, հեղինակը հաջողությամբ իրականացրել է առկա տեսական և մեթոդաբանական մոտեցումների խորը վերլուծություն, ինչը թույլ է տվել հստակորեն սահմանել հետազոտության հայեցակարգային հիմքերը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի տարածքային անհամաչափությունների առաջացման հիմնական գործոնների և փոխանցման մեխանիզմների տեսական ուսումնասիրությունը: Հեղինակի կողմից կատարված տեսական ակնարկը և ժամանակակից ակադեմիական գրականության (այդ թվում՝ 2022-2024 թվականների աշխատությունների) ու ՏՀԶԿ ռազմավարական սկզբունքների ներառումը հանդիսանում են մեթոդոլոգիապես ամուր տեսական հիմք հաջորդող էմպիրիկ հետազոտության համար: Հեղինակը վերլուծել է միջազգային կազմակերպությունների փորձն ու հանձնարարականները արդյունավետ տարածքային քաղաքականության իրականացման վերաբերյալ:

Ատենախոսության ***երկրորդ գլուխը***, որը կրում է ***«Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների անհամաչափության հիմնական գործոնների գնահատումը»*** (Оценка основных факторов неравномерности регионов Республики Армения) վերնագիրը, հանդիսանում է հետազոտության առանցքային վերլուծական հիմքը: Այս գլխում իրականացված վերլուծությունը տրամաբանորեն բաժանված է երկու հիմնական ուղղությունների՝ ներքին գործոնների գնահատում և արտաքին գործոնների գնահատում:

Ներքին գործոնները գնահատելիս հեղինակը համակողմանիորեն վերլուծել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական ցուցանիշները, վեր հանել դրանց տնտեսական մասնագիտացման առանձնահատկությունները և իրականացրել աշխատանքի

արտադրողականության վրա ազդող գործոնների տնտեսաչափական մոդելավորում՝ ռեգրեսիոն վերլուծության միջոցով:

Արտաքին գործոնների գնահատումը ատենախոսությանը հաղորդել է ինքնատիպություն՝ հանդիսանալով գիտականորեն արժեքավոր հատվածներից մեկը: Հեղինակը դուրս է եկել զուտ ազգային շրջանակներից, վերլուծել հարևան երկրների տարածքային զարգացման վիճակագրությունը և համապատասխան տնտեսաչափական մոդելի միջոցով գնահատել հարևան պետությունների տարածաշրջանային զարգացման ու ՀՀ մարզերի առաջընթացի մակարդակների փոխադարձ (խաչաձև) ազդեցությունը:

Ատենախոսության ***երրորդ գլխում***, որը կրում է ***«Պետական քաղաքականության գնահատումը տարածաշրջանային համաչափ զարգացման շրջանակներում»*** (Оценка государственной политики в рамках равномерного регионального развития) վերնագիրը, հետազոտությունն անցնում է գործնական-կիրառական հարթություն: Հեղինակը մանրակրկիտ քննարկման է ենթարկել ազգային և տարածքային մակարդակների ռազմավարական փաստաթղթերը: Հատկանշական է, որ առանձին-առանձին վերլուծվել են Երևան համայնքի և ՀՀ բոլոր 10 մարզկենտրոնների (Գյումրի, Վանաձոր, Իջևան, Աշտարակ, Հրազդան, Գավառ, Արտաշատ, Արմավիր, Եղեգնաձոր, Կապան) զարգացման ծրագրերը: Այս գլուխը տրամաբանորեն եզրափակվում է նշված ծրագրերի իրականացման ֆինանսական կայունության երաշխիքների և բյուջետային հնարավորությունների համակողմանի վերլուծությամբ:

Աշխատանքի ***«Եզրակացություններ և առաջարկություններ»*** բաժնում հստակորեն ամփոփված են հետազոտության հիմնական գիտական արդյունքները, և ներկայացված են կոնկրետ, գործնական հանձնարարականներ՝ ուղղված ՀՀ-ում երկարաժամկետ կտրվածքով տարածքային համաչափ զարգացման քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Ատենախոսության մեթոդաբանական և տերմինաբանական հստակության տեսանկյունից հարկ է նշել, որ հեղինակի կողմից ռուսալեզու տեքստում ՀՀ վարչատարածքային միավորների համար «регионы» տերմինի համատարած

կիրառումն ամբողջովին ճշգրիտ չէ: Մեթոդաբանական տեսանկյունից ավելի ճիշտ կլիներ օգտագործել «марзы Республики Армения» ձևակերպումը, ինչը հիմնավորվում է երեք առանցքային հարթություններում.

- **Տեսական հարթություն.** Տարածքային պլանավորման մեջ «регион» հասկացությունն ունի ավելի լայն, հաճախ միջպետական կամ մակրոտնտեսական բնույթ: Երբ տեսական մասում քննարկվում է «ռեգիոնների մասնագիտացումը», իսկ էմպիրիկ բաժնում դիտարկվում են ՀՀ վարչատարածքային միավորները, առաջանում է հասկացությունների մասշտաբային անհամապատասխանություն: «Տարածքային զարգացում» (Региональное развитие) տերմինն ընդունելի է որպես գիտական ուղղություն, սակայն ուսումնասիրության առարկան պետք է կոչվի իր անունով՝ մարզ («марз»):
- **Գիտական-մեթոդաբանական հարթություն.** Ատենախոսության 2-րդ նորույթում ներդրված եռամակարդակ էկոնոմետրիկ մոդելի բոլոր մակարդակների համար միևնույն «регион» բառի կիրառումը նվազեցնում է մոդելի ընկալելիությունը: Գիտականորեն շատ ավելի հստակ կլիներ տարանջատել ՀՀ մարզերը (марзы) և հարևան երկրների սահմանակից տարածաշրջանները (приграничные регионы):
- **Պրակտիկ-օրենսդրական հարթություն.** ՀՀ Սահմանադրությամբ և «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով «տարածաշրջան» («регион») իրավական կատեգորիա գոյություն չունի: Բոլոր ռազմավարական փաստաթղթերը, տեղական բյուջեները և ֆիսկալ քաղաքականության ծրագրերը (որոնց արդիականացմանն էլ միտված է 3-րդ նորույթը) իրավականորեն կապված են հենց մարզերի հետ: Ուստի, կիրառական տվյալների նույնականացումը պահանջում է երկրի պաշտոնական վարչական տերմինաբանության օգտագործումը:

2. Ատենախոսության 3-րդ գլխի 3.1. ենթագլուխը բավականին հարուստ է փաստացի տվյալներով և ցույց է տալիս ռազմավարական փաստաթղթերի լայնածավալ ուսումնասիրություն: Սակայն, այստեղ կան տերմինաբանական

անհամապատասխանություններ, որոնց ուղղումը էապես կբարձրացնի աշխատանքի գիտական մակարդակը: Այսպես.

- Քանի որ վերլուծվում է ՀՀ օրենսդրությունը (մասնավորապես «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը), ապա ամբողջ տեքստում «сообщество» բառը պետք է փոխարինվի «община» տերմինով, քանի որ խոսքը վարչատարածքային միավորի և բյուջետային համակարգի մասին է: *«Сообщество»* կարող է լինել, օրինակ, գիտական համայնքը (научное сообщество):

3. Ատենախոսության 3-րդ գլխի 3.1 բաժնում հեղինակն իրավացիորեն մատնանշում է ազգային ռազմավարական փաստաթղթերում «տարածաշրջանային զգայունության» բացակայությունը, ինչը թույլ չի տալիս հասցեագրել մարզային անհամաչափությունները: Սակայն աշխատանքի վերլուծական արժեքը էապես կշահեր, եթե այս քննադատությունը հեղինակը կառուցեր հենց 2-րդ գլխում իր ստացած էմպիրիկ մոդելի արդյունքների հիման վրա: Այս կապի ցուցադրումը թույլ կտար որակական քննադատությունը վերածել հիմնավորված մակրոտնտեսական առաջարկության՝ ուղղված պետական պլանավորման հորիզոնների վերանայմանը»:

4. Ատենախոսության 3-րդ գլխում հեղինակի կողմից ներկայացվել են պետական տարածքային քաղաքականության կատարելագործմանն ուղղված և ֆինանսական ապակենտրոնացման վերաբերյալ բավականին հետաքրքիր առաջարկություններ, սակայն դրանց իրագործելիությունը և դրանցից բխող հնարավոր սոցիալ-տնտեսական հետևանքները բավարար խորությամբ գնահատված չեն: Մասնավորապես, բացակայում է առաջարկվող քաղաքականության սցենարային վերլուծությունը, ինչպես նաև պետական բյուջեի և համայնքային ֆինանսների վրա հնարավոր ազդեցությունների քանակական գնահատումը: Նման վերլուծությունը հնարավորություն կտար առավել հիմնավորված գնահատել առաջարկվող միջոցառումների արդյունավետությունն ու կիրառելիությունը Հայաստանի Հանրապետության պայմաններում:

5. Աշխատանքում առկա են որոշակի տեխնիկական վրիպակներ: Մասնավորապես, ատենախոսության «Բովանդակություն» բաժնում հստակ նշված է 3 գլուխ,

մինչդեռ ներածության համապատասխան հատվածում շարադրված է, որ աշխատանքը կազմված է հինգ գլխից: Անհրաժեշտ է աշխատանքի կառուցվածքային նկարագրությունը համապատասխանեցնել բուն բովանդակությանը:

Եզրակացություն

Ներկայացված ատենախոսությունն աչքի է ընկնում ակադեմիական բարձր մակարդակով, հետազոտական խորությամբ և ունի մի շարք ակնհայտ արժանիքներ:

Հեղինակի կողմից կատարվել է հսկայածավալ, ինքնուրույն աշխատանք, տվյալների նախնական մշակումն իրականացվել է գրագետ: Հեղինակը հաջողությամբ կիրառել է հետազոտական մեթոդների լայն գործիքակազմ: Տնտեսաչափական մոդելների ախտորոշիչ թեստերը փաստում են ստացված արդյունքների հուսալիության մասին:

Աշխատանքը կտրված չէ տնտեսական իրականությունից: ՀՀ բոլոր 10 մարզկենտրոնների և Երևանի զարգացման ծրագրերի առանձնացված վերլուծությունը, ինչպես նաև հարկային եկամուտների բաշխման ֆիսկալ կանոնների փոփոխության սցենարային մոդելավորումը պատրաստի գործիքակազմ են ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու Ֆինանսների նախարարության համար:

Հեղինակին հաջողվել է հստակորեն հիմնավորել, որ ՀՀ տարածքային անհամաչափությունների հաղթահարումը ոչ միայն սոցիալական աջակցության, այլև տնտեսական արտադրողականության բարձրացման ու ֆիսկալ ինստիտուտների բարեփոխման խնդիր է:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը՝ ներառելով հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հինգ գիտական հրապարակումներում:

Վերոնշյալ դիտողությունները կրում են մեթոդաբանական, խմբագրական բնույթ և չեն նսեմացնում ներկայացված հետազոտության գիտական արժեքը:

Հակոբ Համբարձումի Մանուկյանի՝ «Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրները երկարաժամկետ հեռանկարում (ՀՀ օրինակով)» թեմայով, ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է **Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վ.Ի.Տիգրանյան**

Վ.Ի. Տիգրանյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝
Ռուս-Հայկական համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ. **Ռ.Ս. Կասաբաբովա**

16 հուլիսի 2026 թ.